

ՀԱՅՐԵՆԻՔ

Փ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն

Լ Ր Ա Փ Ի Ր

Ամեն երեքշաբթի օրերը կը հրատարակուի: Պոստը համար 50 բուռն գինն է 2 արծաթ Մեծիս կանխիկ: Բոլորատարածան ծախքը բաժանորդաց վրայ իսկ գաւառաց համար 2 1/2 արծաթ Մեծիս: Ծանուցման տողը 2 գրչ:

Գաւառաց բոլորատարի ծախքը բաժանորդաց չ'վերաբերիր: Լրագրոյս վերաբերեալ որ եւ է գրութիւն ուղղելի առ Տնօրէն-խմբագիր Մ. Յ. Մեկիսեան ի Կ. Պոլիս Ձիւմպիւլի խան վերնա-յարկ քիւ 10:

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Բ. Դրնէն անցեալ շաբթու Պատրիարքարան եկաւ Բերայի ազգային գերեզմանատան Կայսերական իրատէն, որ Բերայի գերեզմանատան ի բազմաց ժամանակաց անտի Հայոց ազգի սեփականութիւնը ըլլալը յայտնելով, նոյնին մէջ խնդրուած ազգային վարժարանի շինութիւնը կը հրամայէր:

Այս առթիւ ապերախտութիւնը բաժ կը շարունակէր, եթէ Կայսերական բարեխնամ կառավարութեան շնորհաց և Ամեն Ս. Պատրիարք Հօր ազգասիրական ջանքից համար ազգովին գոհունակութիւն և շնորհակալութիւն յայտնել չը փութամը:

Կ. Պոլսոյ և Երուսաղէմայ Պատրիարքական Գեր. Փոխանորդը շարժ օր Կաթողիկոս Պատրիարքական Տեղապահ Ամպերայեան Գեր. Մովսէս Եպիսկոպոսին փոխադարձ այցելութեան երթալով, մեծարանօք ընդունուեցան և մէկ ժամէն աւելի տեսնուեցան: Հոն կը գտնուէին բազմաթիւ եկեղեցականք, վսեմ. Պէտան պէյ և ուրիշ բարձրաստիճան անձինք:

Թատրոնի տնօրէն վարդովեան գիր մը տուաւ անցեալ շաբթու առ Ամեն Ս. Պատրիարք Հայրն, որուն մէջ յունական կրօնն ընդունած և յունական պատկառ յոյն աղջկան մը հետ ամուսնացած ըլլալու լուրը հերքելով, կը յայտարարէ թէ ինքը Հայաստանեայց եկեղեցւոյ զուակ է և պիտի մնայ միշտ, և թէ պատրաստ է իր կիներ ընդունելու, եթէ նա (կիներ) ինքզինքը ուղղութեան մէջ դնէ:

Փափաքելի էր որ վարդովեանի սոյն յայտարարութիւնը անկեղծ և ստույգ եղած ըլլար, վասն զի լուր կուտան մեզ թէ վարդովեան ամուսին կարծեցեալ յոյն աղջկան հետ տակաւին կենակցութիւն կընէ, մինչդեռ ինքը Պատրիարքարանի խօսք տուած էր զայն իր քովէն վաճառելու:

Վարդովեանի այն յայտարարութիւնը թէ պատրաստ է իւր կիներ ընդունելու եթէ ինքզինքը ուղղէ, չը կրնար արդարացնել զինքը. վասն զի ինքը եթէ ընտանեւոր և ողջախոհ մէկն էր, մինչև ցարդ պէտք էր ինքնաբերաբար սոյն յայտարարութիւնն ընէր և իր կիներ ուղղութեան հրաւիրէր, եթէ իրօք յանցապարտ էր, Հետեւաբար Ազգ. Պատրիարքարանէն հարցաքննութեան կանչուելով, իր վրայ եղած տարածայն

նութիւնը քննութեան ենթարկելու և իւր խոստովանութիւնը լսելու պահուն ելնելայսպիսի յայտարարութիւն մը ընելը ապացոյց չէ և չլըրնար ըլլալ հաւատարմութիւնը ուղղախոհ, ամուսնական և ծնողական սէր ունեցող մէկն է, մասնաւորութեայքան տարիէ ի վեր իր կիներ ուղաւակները անխնամ և անպաշտպան թողուլը նոյն իսկ իր անձին դատապարտութիւնն է:

Չիլիկիւրեան Յակոբ վարդապետ զոր Մէրսինէն մայրաքաղաքս բերելու համար թագրի գրուած էր Ազգ. Պատրիարքարանէն, տեղական կառավարութեան միջոցաւ ուրբաթ օր մայրաքաղաքս և երէկ Պատրիարքարան գալով, Ազգ. Հիւանդանոցի վանքը խրկուեցաւ յապաշխարութիւն:

Յիշեալ վարդապետը մինչև ցարդ ունեցած գայթակղական վարմանցը համար զղջման գիր տուած է առ Ս. Պատրիարք Հայրն:

Ամեն Ս. Պատրիարք Հայրը Մագսուտեան վսեմ. Սիմոն պէյի հետ այսօր Բ. Դուռը կերթալ բարձր. Մեծ Եպարքոսին, բարձր. Շէյխ-Իւլիսլամ Եֆէնտիի և բարձր. Հիւսէին Ավինի փաշայի ընտրութիւնը շնորհաւորութիւն:

Պաղչէճիկի աղջկանց դպրոցի անկերպարան փոխակին վրայ լըրագրոյս միջոցաւ ժամանակ ժամանակ ցաւ յայտնած և դարմաններ ցըցուցած էինք:

Գոհ եմք լսելով որ մեզ հայրենակից ուսումնասէր խումբ մը տիկնայք այս անգամ միանալով, աղջկանց դպրոցի վիճակը ուղղութեան առեր և խնամակարութիւն մը կազմելու դիտաւորութիւն և փափաք յայտնեցին:

Հարկ չկայ այս ուսումնասէր տիկնանց դիտաւորութիւնն ու փափաքը գովելու: Վասն զի Պաղչէճիկի մէջ առաջին անգամը չէ որ այսպիսի հայրենասիրական դործի մը կը ձեռնարկեն տիկնայք. տեղւոյն ազգային դպրոցը քանի քանի անգամ նոցա ծառայութեանց պատուը վայելած է:

Ուստի կը յորդորեմք մեր ուսումնասէր և ազգասէր հայրենակից տիկնանքը որ իրենց ազգօգուտ ձեռնարկութիւնը ժամ առաջ ի գործ դնելով, աղջկանց դպրոցի նիւթական և ուսումնական վիճակը կերպաւորեն և այս անգամ ալ փորձով ցուցնեն թէ Պաղչէճիկի տիկնանքը Պոլսոյ տիկնանքէն վար չեն մնար

դպրոցական ծառայութեանց մէջ: Այս պայմանաւ մեք ևս կը խոստանամք մեր փոսանն աջակից ըլլալ իրենց:

Տեղւոյն ուսումնասէր երիտասարդութիւն ալ իր ջանքը խնայած չէ այս մասին, որուն վրայ յաջորդութեամբ պիտի խօսիմք:

Իզմիրէն հետեւեալ բերկրաւիթ լուրերը կը հաղորդեն մեզ:

«Տեղւոյս Ազգ. խնդրոյն նկատմամբ վերջապէս Եպարքոսական հրամանագիրն բարձր. վալիին զըրկուած ըլլալուն անմիջապէս դործադրել փութաց, յազգ. առաջնորդարանէն կորզուած ազգ. տուժարները ֆաղ ժողովոյ յանձնուեցան, նորընտիր երեսփոխանական ժողովուրդը երէկ ուրբաթ կէս օրէն ետքը իր առաջին նիստը ըրաւ նմանը չի տեսնուած օրինաւորութեամբ ու հանդարտութեամբ ի ներկայութեան գրեթէ բոլոր անդամոց ու իր դիւանը կազմեց հետեւեալ անձերէ որք են:

Ատենապետ Եսայի Էֆ. Եսայեան Ատենադպիր Խաչատուր Էֆ. Չաքէեան

Փոխ-ատենապետ Խաչատուր Էֆ. Մարգար Էֆ. Իրիզեան

Փոխ-ատենադպիր Ստեփան Էֆ. Տէսթէրէճեան

«Տեղեկագիրն ալ այսօր աւստրիական շոգենաւով յաղգ. Պատրիարքարան զրկուեցաւ: Այսպէս ահա իզմիրի հիւանդաց խնդիրը կը լուծուի, ժողովրդեանս նուիրական իրաւունքը կը պսակուի, յուզեալ սիրտերը կը հանդարտին ու խաղաղութիւնը հիմնովին կը հաստատուի ի շնորհս Ամեն Սրբազան Պատրիարք Հօր ու վարչութեան, որոնց մեր խորին շնորհակալքը կը մատուցանենք ու կը մաղթենք որ այսպիսի սահմանադրասէր, անձնուէր անձինք մեր ազգին մէջէն պակաս չըլլան:»

Մարտ 27 թուով կարսէն առ մեզ գրուած հետեւեալ դէպքերը բարեխնամ կառավարութեան ուղարկութեանց կը մատուցանեմք խնամարհաբար:

«Շիրակայ» սոյն պտղեղ երկրին ժրաջան մշակը կծկեալ յուսաբեկ կը թանչէ կը թառանչէ տրտմազին, մաճը ցուկիկին կրթնցուցած ինքը մութ աւելին տակ ընկողմնած կը տուայտի օրն ի բուն դատարկանցուկ. - վասն զի անդատանն իւր չէ, պալտին և արօտականք իւր չեն,

իսկ իւր կեանքն իսկի ապահովեալ չէ: - Տաճկաստանի Շիրակայ արգաւէտ երկիրը խուճք մը աւազակաց ասպատակաց արշաւանքի և եղեռնագործութեան տեղի մ'է, և այնպիսեաց ապաստան մի՛ այլ և ի հերոն հետէ: Առ և ապուր, արիւն և եղերանք և միանգամայն բաց ի յուսանց հասարակաց, գիւղէ ի գիւղ գնալը կարելի չէ. - մարեցաւ Շիրակ, քանզի խաղաղեցաւ առ հասարակ. քանի՛ քանի տեղացի՛ պանդուխտ ունեւորք աղքատացան. և քանի՛ ք սոյ ճարակ գնացին:

«Սոյն խուճանը ոմանք իրանէն ոմանք Ռուսիոյ Սիպերիայէն վտարացող է ոմանք աստի անտի՛ վերջապէս 50ի չափ սպառուաւ զինեալ ձիաւոր և քաջամարտիկ անձինք են և գնդապետի հրամանի ներքև, երբեմն և թևի բաժնուած՝ երբեմն միահամուռ գրոհ կուտան այս կամ այն գիւղին. ո՛ր գիւղ մտնեն, տարաբաղդ գիւղացիք առ ահի կը գիւմաւորեն, ընդունելութեամբ կը պատուեն, կը կերցնեն՝ կը խմցնեն և ծանրագին ընծայիւք կը ճամբեն:

«Սոյն արիւնուշտ աստանդական խուճին մէջ կըսուի նաև թէ՛ կան կովկասեան հայք, յորոց մին պարագլուխ է և քաջամարտիկ ասոյեան մը. ինչպէս սա՛ նոյնպէս իւր արբանեակք և խմբին մեծագոյն մասը կըսուի՛ թէ բաւական է որ ոտքը ասպանդակին դնեն, ամեն մէկը 30-40 ձիաւոր կատէ և կը վայրատէ, քանզի զինական կրթութեան և հեծելամարտութեան մէջ մեծ վարժութիւն և հռչակ ունին:

«Շաճ եմք թէ տեղական կառավարութեան տնօրինութեամբ վաշտ մը հեծելազոր զրկուած է ի Շիրակ. որոշուած է նաև Չիլանի միւտիւրը 150 քրդի ձիաւորով քանի մ'օրէն երթալ անդ, կըսուի թէ 40 ձիաւոր ալ Հասարանցի քուրդ Մաղկերտէն եկած են այս օրեր ի Շիրակ՝ աւազակապետներէն վրէժ լուծելու. որովհետև սոքա հերոս Բասենի մէջ մեծամեծ նախճիր գործած ատենանին ոչխարառու Հասարանցի մը սպաննած և 360 ոսկւոյ գումար մը՝ ճակնճոյգը և բոլոր գոյքը կապտած են:»

—Գարձեալ կարսէն ապրիլ 17 թուով:

«Թէ կարնոյ և թէ տեղւոյս կառավարութեան կողմանէ ի Շիրակ իջած 150՝ աւազակաց հետամուտ հեծեալք մեկ երկու անգամ պատահած են աւազակաց ակումբին և նոցա հետ մարտնչած են. աւազակ-

սպերիչ
Նիկոմիդիա
Լրագրոյս ունեցած պարտքերնիդ մինչև ցարդ չը վճարենիդ մեծ ամօթ է . ուստի կը հրաւիրեմք զՁեզ որ ձեր լրագիր կարգալու սովորութիւննիդ մէկդի թողուի, պարտքերնիդ ժամ առաջ վճարէք :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ուրբաթ օր Վեհ. Սուլթանը Մեծ Եպարգոս Բարձր. Մահմուտ Նէտիմ փաշան հրաժարեցնելով, Բարձր. Մէհմէտ Բուշտի փաշան Մեծ Եպարգոս, Բարձր. Խայրուլլահ էֆէնտին Շէյխ-Իւլ-Իսլամ, Բարձր. Հիւսէյն Ափի փաշա զինւորական գործոց պաշտօնեայ և Վսեմ Ապտիւլ Գէրիմ փաշա սպարապետ (Սէրտարը-Էրէմ) անուանեց, Նորընտիր նախարարք ուրբաթ օր ժամը 8 1/2 ին կայսերական պալատէն ելնելով, Սիրքէճի իսկէլէսի և անտի Բ. Գուռը եկան մեծաւ հանգիսիւ, ուր ժողովրդեան խուռն բազմութիւն մը լըցուած էր :

Ժամը 9 ին կայսերական խաթիթը կարգացուցելով ի Բ. Գուռն ի ներկայութեան բոլոր նախարարաց, բազմութիւնը սկսաւ կամայ կամաց ցրուիլ :

Նոյն օրը հանդիսէն վերջը տարածայնութիւն մը ելաւ, որպէս թէ Սօֆիաները շուկան կոխեր և արհեստաւորները ահ ու գողի մէջ ձգեր են : Ասոր վրայ խանութպաններէն ոմանք խանութիւն գոցելով, ոմանք բաց ձգելով, վախով և սարսափով պաշարեալ տուններին փախած էին :

Սակայն այսպիսի կասկած մը անհիմն և սուտ ըլլալուն բոլոր ժողովուրդը ի վերջոյ համոզուեցաւ, մանաւանդ թէ իմամները և Սօֆիաները բացարձակապէս կը խօսէին և կը քարոզէին թէ իրենք քրիստոնէից դէմ ու և հակակրօնութիւն մը կամ թշնամութիւն մը չունին . հետեւաբար բոլոր քրիստոնէայք պէտք է վստահ և ապահով ըլլան որ կայսերական կառավարութիւնը քրիստոնէայ հասարակութեանց ու և է ֆրաս մը չը հասնելու համար ամէն միջոց ձեռք առած և անոնց պաշտպանութեան համար ամեն ջանք ըրած է և կընէ միշտ, ինչպէս որ ոստիկանութեան պաշտօնեայ Վսեմ Արգի փաշա նոյն օրը արհեստաւորաց երկիւղն ու տագնապը լսելով, խուռն մը զինւոր հետը շուկայ գնաց և գողուած խանութները բանալով ամէն կերպով վստահացուց և ապահովեց զիրենք :

— Բարձր. Միտհաթ փաշայի Պրուսայի կուսակալ անուանելուն լուրը սուտ ելաւ :

— Երեք մեծ անգղիական զրահաւոր հասած է Իզմիր, ուր Տարտանէլի մօտ Պէտիքայի ծոցը մտնելու համար հրամանի կապանն, ուրկէ Կ. Պօլսոյ հետ հաղորդակցութեան պիտի դուրսին :

— Ռուսաց դեսպան Զորպետ Իկնաթիէվ շարաթ օր Բերայէն Պէօշուքտէրէի ապարանքը փոխադրեց իր բնակութիւնը :

— Այս օրերս Իտալական Սիլա շոգենաւին կապառուի, որ թօփհանէի առջև խարխալ պիտի նետէ :

իր մէջն ունենալով 100 ի չափ նաւատի :

— Հինգ շարթի իրիկուն Անգղիական պատգամաւորութիւն մը ներկայացաւ Անգղիայ դեսպանին, կըսէ Լէվանթ Հէրալտ, և երեւելի Անգղիացիներէ ստորագրեալ տղերսագիր մը մատոյց, որուն մէջ Անգղիացի ժողովրդեան անպաշտպան դիրքը յայտնելով, անգղիական նաւու մը Վոսիփոր բերուիլը կը խնդրէին : Դեսպանը պատասխանեց թէ տաճկաց կողմանէ քրիստոնէից դէմ ու և է բռնարարութիւն մը չկայ և չպիտի ըլլայ և Պօլսոյ ժողովրդեան շարժումը բոլորովին տարբեր նպատակ մը ունի :

Լէվանթ Հէրալտ կըսէ թէ դեսպանը Կ. Պօլսո նաւատորմի բերելու հեղինակութիւնը չունի, զի դաշնագրութեան հակառակ է . բայց Եաֆա գետնուղ նաւապետին իմաց տուած է արդէն որ Տարտանէլի մօտ Պէտիքայ գայ հաստատուի, ինչպէս որ եկած է այժմ : Դեսպանը յայտարարեց թէ ու և է մօտալուտ խռովութիւն մը չը տեսներ ինքը . բայց եթէ պատահի, ամեն անգղիացի հպատակը ազատ են դեսպանատունն դալ ապատանելու, որ պատրաստ է զիրենք ամեն կերպով պատսպարելու :

Դեսպանին այս յայտարարութեան վրայ պատգամաւորութիւնը գոհութեամբ մեկնեցաւ :

— Մայիս 11 թուով Պէրլինէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Էթիօպի փաշա իր դեսպանական գրեւոր հանդիսաւոր կերպով կիլիսովկայսեր ներկայացուցեր է :

— Փարիզէն մայիս 11 թուով եկած հեռագրէ մ'ալ կը տեղեկանամք թէ Օսմանեան դեսպան Ստորգ փաշա Սէլանիկի սպանութեան դէպքին վրայ ի դիմաց Օսմ կառավարութեան ցաւ և միշտ յայտնել է արտաքին գործոց պաշտօնեայ Տըքազ գուբօնին :

— Պուլկարիայէն եկած լուրերը կը ծանուցանեն թէ Հաֆըզ փաշան յի գուռերը Մարիճաի ձախ եղերքը շատ մը տաճիկ դիւղեր շրջապատեր և ապստամբաց մեծ կոտորած տարով, այս վերջինները Պալքաննեները փախեր են, թաթար Բաղարճը մէջ 18,000 զինւոր կայ եղեր Ատիլ և Հաֆըզ փաշաներու հրամանաց ներքև : Երկաթուղին մինչև Յիլիպէ անարգել կերթել է :

— Պէրլինէն մայիս 11 թուով եկած հեռագիր մը լուր կուտայ թէ Անտրասի կոմսը նոյն օրը կիլիսովկայսերն ընդունուեր և յետոյ Ռուսիոյ կայսեր հետ երկարօրէն տեսակցեր է որ մի և նոյն օրը Պէրլին հասած է եղեր : Նոյն իրիկունը երեք նախարարաց առաջին ժողովը տեղի ունեցեր է : Մայիս 12 թուով եկած ուրիշ հեռագիր մ'ալ կը ծանուցանէ թէ Ռուսիոյ կայսրը Անտրասի կոմսը ընդունելու ատեն իր կախած երեք պատուանշանները ցուցնելով (Ս. Գեորգի, Մարի Թէրէզաի և Մէրիթի պատուանշանները) « ահա՛ իմ աշխարհավարութեանս հիւր » ըսեր է :

— Շարաթ օր ուսանող կրօնաւորաց կողմանէ շնորհակալութեան ուղերձ մը տրուեր է Վեհ. Սուլթանին :

— Սպարապետ Ապտիւլ-Գէրիմ փաշա հետն ունենալով Կ. Պօլսոյ կայսերական բանակին հրամանատար Շէվքէթ փաշա երկու գուռը հետեւակ զօրքով այսօր Յիլիպէ կը մեկնի :

— Լէվանթ Հէրալտ շարաթ աւուր թուով Ռուսիոյ դեսպանին իր դեսպանատունը քանի մը հարիւր խրուածներով պաշտպանած ըլլալուն համար հեղինական յօդուած մը հրատարակած ըլլալով, տպագրական տեսութեան հրամանաւ առանց պայմանաժամի դադարեցաւ :

— Սէլանիկի կուսակալ Էլչիֆ փաշայի և Վահան էֆէնտի կողմանէ առ արտաքին գործոց Նախարարն մայիս 13 թուով եկած հեռագիր մը լուր կուտայ թէ 35 հոգի Սէլանիկի սպանման դէպքին մէջ իբր մեղսակից նկատուելով, ձերբակալուեր են առանց փոքր ինչ ընդդիմութեան և թէ ձերբակալութիւնը կը շարունակուին . քաղաքին մէջ խաղաղութիւնը բոլորովին տիրեր է :

— Նորընտիր Եպարգոս Բարձր. Մէհմէտ Բուշտի փաշա Տոնկաստանի բոլոր կուսակալաց շրջաբերականներ ուղղեց իր ընտրութիւնը ծանուցանելով և պատուիրելով որ Վեհ. Սուլթանին ամեն կարգի հպատակաց բարեկեցութեանը և անդորրութեանը հսկեն :

— Բարձր. Շէյխ-Իւլ-Իսլամ էֆէնտին շարաթ օր Մեծ Եպարգոսին, Պատերազմական գործոց պաշտօնէին և Սէրտար-Էրէմ Ապտիւլ Գէրիմ փաշայի հետ տեսութիւն ըրաւ :

— Շարաթ իրիկուն Հիւսէյն Ափի և Ապտիւլ Գէրիմ փաշաները Մեծ Եպարգոսին ապարանք ձաշեցին և յետոյ խորհրդակցութիւն մ'ունեցան ի ներկայութեան ուրիշ քանի մը նախարարաց :

— Վեհ. Սուլթանին թիկնապահ Թահսին պէյ անցեալ շարթու Խտիրնէ գնաց Պուլկարիոյ մէջ ծագած խռովութիւնը քննելու և ըստ այնմ տեղեկագիր մը մատուցանելու համար առ Վեհ. Սուլթանին :

— Բարձր. Մայր Թագուհին ուրբաթ օր բազմութիւ կով կտրել տալով, իմամներու միջոցաւ մայրաքաղաքիս այլ և այլ թաղերը բաժնել տուաւ : Նոյնպէս դպրոց երթալու տարիքն ունեցող աղքատ տղայոց ցանկն ուղեց անոնց նուէրներ բաժնելու համար :

— Լա թիւրքի կը գրէ թէ Խըտիլին չորրորդ օրդի Իպրահիմ փաշա այս օրերս մայրաքաղաքս պիտի գայ հետն ունենալով իւր իշխանուհի մայրը, որ Էմիրիկանի ապարանքը պիտի բնակի օղափոխութեան համար :

— Սալամինիա անուն յունական պատերազմական շոգենաւը Վիրակի իրիկուն Սէլանիկէն մայրաքաղաքս հասաւ : Այս շոգենաւը որուն մէջ երկու թնթանօթ և 60 ի չափ նաւաստի կը գտնուին, Կ. Պօլսո պիտի մընայ Հիլլինաց դեսպանին տրամադրութեան ներքև :

— Սօֆիաները շարաթ օրուրէն ի վեր իրենց դասերը շարունակել սկսան :

— Սուլթանիէ անուն պատերազմական նաւը ուրբաթ օր Էրէյլիէն մայրաքաղաքս վերադարձաւ :

Թաիֆ անուն շոգենաւն ալ շարաթ օր Գլէքէն մայրաքաղաքս հասաւ :

Արքունի ուրիշ շոգենաւ մ'ալ կիրակի օր զօրաց դուռնու Սև ծովէն Պօլսո հասաւ :

— Երեք գուռը զօրք երէկ երկաթուղիով Էտիրնէ և Պաղարճը գացին :

— Պատիւէթ կըսէ թէ Էտիրնէի մէջ յեղափոխական յանձնաժողովի մը կազմութիւնը երեան ելեր է : Այս յանձնաժողովոյ անդամ են եղեր երկու Սերվիացի, երկու Գարատաղի և չորս Պուլկար :

Նոյն լրագիրը կը յաւելու նաև թէ Էտիրնէ քաղաքը 3000 պահապան զօրքով ապահովեալ է և թէ քաղաքը կատարեալ խաղաղութեան մէջ է :

— Վիէնայէն մայիս 14 թուով երէկ հասած հեռագիր մը լուր կուտայ թէ մայիս 13 ին, այսինքն երէկ Անտրասի կոմսը Պէրլինէն մեկնեց է :

— Աղէքսանդր կայսրը մայիս 14 ին Էմն գացեր է : Կօրչաքօ իշխանն ալ երէկ Պէրլինէն մեկնեց է :

— Կազէթ տը Բօլճնեք լրագիրը Կօրչաքօ իշխանին կողմանէ տերութեանց մատուցանելի ծրագրին վրայ խօսելով կըսէ թէ Բ. Գրան կողմանէ խոստացեալ բարենորոգումները գործադրելու համար զինադադար կառաջարկէ :

Փարիզի մէջ հետեւեալ եղերական դէպքը պատահեր է :

Անտրէա անուն երկրաչափ մը որ իւր ամուսինով այրի և երկու փոքրիկ գեղանի աղջկանց հայր էր, իր բազմամեայ սպասուհին ճամբելով, ուրիշ աղջիկ մը կը բռնէ : Այն օրը որ ճամբուած սպասուհին տունէն դուրս պիտի ելնէր մէյմ'ալ չը դաւու պայմանաւ, վրէժինդրութեան զգացում մը կը ծնանի սրտին մէջ և ժամը ճիշդ 4 ին յորում երկրաչափը տուն պիտի դառնար, սպասուհին դրան ետին կապան իւր տէրը վերջին անգամ մ'ալ տեսնելու համար : Այս միջոցին սանդուխտ վրայ ոտքի ձայն մը կը լսուի . սպասուհին, « ահա՛ եկաւ » կըսէ ինքնիրեն . բայց երբ կը տեսնէ որ փոխանակ երկրաչափին կօշկակար մ'է եկողը, կայսրը :

Կօշկակարը սպասուհին այլադուսնիլը տեսնելով, պատճառը կը հարցնէ . աղջիկը կը պատասխանէ թէ բան մը չկայ, տիրոջը կսպասէ : Եւ սակայն կօշկակարը դաշնի մը ծայրը տեսնելով քղանցքին ներքև, կը յաջողի զայն ձեռքէն առնելու . ասոր վրայ աղջիկը սարսափահար տուն կը նետուի և դուռը բանալով կը դոցէ :

Կօշկակարը անմիջապէս ոստիկանութեան դիմելով, դաշնը պաշտօնէին կը յանձնէ և հետը ոստիկան մը առնելով տուն կը դառնայ : Ոստիկանը դուռը կը զարնէ, բայց սպասուհին առջի բերան կը մերժէ և վերջապէս կը բանայ . գիրկը առած անդրանիկ աղջիկը հազու իննամեայ և տախտակամածը վազելով փողոց կը նետուի : Կինը և մանկիկը քարայտակին վրայ իննալով, երկուքն ալ անմիջապէս կը մեկնին :

Բայց ողբերգութիւնը այսպիսով չը վերջանար : Ոստիկանը վեր կեցնէ և սոսկալի տեսարան մը աչքին կերկրէ : Միւս մանկիկը որ հազու 7

տարեկան էր, անկողնոյ մը մէջ պառկած հոգեվարք էր. թաշկինակաւ մը սպասուհին խղճած էր զայն, մէկ քառորդի մէջ երեք զոհ:

Այս միջոցին Անտրէա, զաւակաց հայրը տուն կը դառնայ. բայց պահապանը վեր ելնելու կարգիլէ, քստով թէ չվեր մի' ելներ, սպասուհիք իր զինքն սպաննեց, զաւակներդ ոտտիկանութեան ձեռքն են:

Այսպէս բռնանալով վեր ելնել չեն թողոր, այնպէս որ մինչև երէկ իրիկուն թշուառ հայրը իր զաւակաց մեռնիլը չէր գիտեր:

Սպասուհին Օրսուա Վէրնէյ կը կոչուի:

— Անգղիոյ մէջ գիր գրելու մեքենայ մը գտեր են որ մէկ րոպէի մէջ 70-75 բառ դուրս կը հանէ, կատարեալ ընթացիկ կերպով:

Այս մեքենային մանրամասն գործողութիւնները տակաւին գրուած չեն:

Ռուսաց գեոպան իկնաթիւնով զօրապետին Տիկինը երէկ Ս. ֆէթրըսպուրկէն վերադարձած ըլլալով, դեպքանը Բ. Գուռը նորընտիր Մեծ Եպարքոսին շնորհաւորի չկրցաւ երթալ:

— Պուրէշէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ 16 միլիոնի փոխառութեան խնդրոյն համար գանձուց միւտիրներուն տուած ծրագիրը ձերակուտի ժողովէն ընդունուեր է:

— Երէկ իւլէմաներու բազմութիւն մը Բ. Գուռը գալով, Մեծ Եպարքոսին յայտնութեան համար բարեմաղթութիւններ ըրին:

— Աւստրիական Լոյտ ընկերութեան Սֆինք շոգենաւը երէկ Օրտուէն և Կիրասոնէն 700 ցամաքային զօրք բերաւ մայրաքաղաքս:

— Թաթար Բազարճըզի մէջ զբրգուութիւն ընող երկու պուլար քահանայ բռնուելով, ոտտիկանութեան դուռը խրկուած են:

— Անցեալ ուրբաթ օր հակառակ Տպագրական տեսչութեան հրամանին Եճմա լրագիրը յաւելուած հրատարակած և սուտ լուրեր տուած ըլլալով, իսպառ խափանեցաւ:

— Պէրլինի արքայաժողովին մէջ Հէրսէքի խնդրոյն համար Անտրասի կոմսէն արուած ծրագիրը քննութեան առնուեր է:

— Պէրլինի արքայաժողովին խորհրդակցութեան արդիւնքը, ինչպէս կըսէ Պէրլինէն եկած հեռագիր մը, սա է եղեր որ երեք տէրութիւնք միաբաներ են Տաճկաստանի դրդուեալ երկիրները խաղաղեցունելու և քրիստոնէայ ժողովուրդը պաշտպանելու համար: Ժողովոյ որոշումը կորչաքօք իշխանին կողմանէ բոլոր տէրութեանց հաղորդուելով, անոնց կարծիքը պիտի ուզուի:

— Գարատաղի ժողովին նախագահը յատուկ պաշտօնով Վիէննա գացեր է:

— Գարատաղի իշխանութիւնը Նիքիթի սահմանադրութիւնը երեք դունդ զօրք խրկեր է:

— Լոնտոնայէն մայիս 13 թուով եկած հեռագիր մը լուր կուտայ թէ Պէրլինէն առնուած տեղեկութեանց նայելով Կ. Պոլսոյ վերջին նախարարական փոփոխութիւնը Պէրլինի մէջ գոհութիւն պատճառներ է:

— Սապահ լրագիրը կը գրէ թէ Պէրլինի Օսմ: դեպքանը Բ. Գրնէն ընդունած հրամանի մը համեմատ Սերվիոյ և Գարատաղի տպատմարաց օգնելը դադարեցնելու համար առաջարկութիւն ըրեր է Պէրլինի արքայաժողովին:

— Աթէնքէն մայիս 13 թուով եկած հեռագիր մ'ալ կըսէ թէ Ամֆիթէաթըր անուն շոգենաւը իզմիր և փարալոս շոգենաւը Սաքըզ կղզին երթալու հրաման ստացեր են:

— Յիշեալ հեռագիրը կըսէ նաև թէ Կ. Պոլսէն առնուած լուրերը Աթէնքի մէջ իրարանցում պատճառներ են:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՅԵՍՈՒՍԻ ՎԵՐՁԻՆ ԾԱԲԱԹ

ԽԱՅԻ ԶԱՌ ԵՒ ԿՈՐՈՒՍԵԼՈՑ

ՅԵՄԱՐՈՒԹԻՒՆ

Հօգեցեց խնդրու հոգի

Խորմեան սրբազանի գրական արդեանց պատուականագրոյն է սոյն մատենիկը, որ թէպէտ փոքր է քանակաւ, այլ կարի' մեծ է պարունակեալ նիւթով և նիւթոյն արժանաւոր գրչով: Վսեմ, քաղցր և ազդեցիկ ոճ մը կը փայլի սկիզբէն ցլերը, և կենդանի ու հոգեկից խանդ մը՝ անոր իւրաքանչիւր բանից և տողից մէջ: Հոգեբանք մ'է լի' ջերմեռանդով, երկնային իրձերով, խաչին սիրով, Աւետարանի խորհրդով, և զորս 'ի բարձրութեան պահելով, այնքան կը պարզէ, որ հայ քրիստոնէին և ամեն ընթերցողին սիրայի ու իմանալի կընէ:

Երկու մասն բաժնուած է զբրքոյկս. առաջինն է՝ Ծաղկաղարդ և Սիօնի վերնատունն ու Չատական գառն և Ս. Հաղորդութեան խորհուրդ. Յիսուս 'ի Գեթսեմանի ձոր. Յիսուս առաջի դատաւորաց. Յիսուս 'ի ճանապարհի խաչակրութեան. Յիսուս 'ի Բեթէլայ սար. Յիսուս սնոգնական թողեալ. Յիսուս 'ի գերեզման մահու. Յիսուս 'ի ներքին բանտըն սանդարամետին. Յիսուսի յարութիւն և յաղթանակ խաչին. Յիսուս 'ի լեռն Զիթնետոց՝ Համբարձումն յերկինս:

Երկրորդն է՝ Հանդէս աշխարհամարտ. Աշխարհ՝ Յիսուսի դէմ. Մամնայն՝ Աստուծոյ դէմ. Նիւթապաշտք՝ Նախախնամութեան դէմ. յաղթանակ ճամբարութեան:

Կը գտնուի Ս. Դ. և Եղմածեան զբառունը՝ Եկնի ճամի փողոց Զիլնկերէր ճատտէսի թիւ 8 գին 1 ֆր:

Վ Է Պ

Հ Ա Ճ Ի Ս Ս Յ Ե Բ

(Թարգ. ի Գաղղ.)

Արմաշու վանաց տպարանի հրատարակութիւններէն գեղեցիկ վիպասանական գրուած մ'է այս՝ յորումութեան ինչ աստիճան չար հետեանքներ ունենալը ստորագրուած է:

Կը ծախուի ի Չարմաքճըլար եօթուշու Գավաթեան Եֆէնտի գրատունը և հայ գրավաճառաց քով գին 15 զր:

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆ

Սիրոյ, երջանկութեան, հաւատարմութեան. — Ամուսնական համակրութեանց եւ հակակրութեանց. — Նախանձ, շնորհիւն, ապահարգան, ամուրտքիւն:

ՀԵՂԻՆԱԿ Ա. ՏԸՊԵՑ

ԹԱՐԳՈՒՆԵՑ Մ. Ս. ԲԱՔՄԱՃԵԱՆ

Ա. Տըպէյի սոյն պատուական և ընտիր գործը որ եւրոպական ամեն լեզուաց թարգմանուած և մեծ ընդունելութիւն գտած է, այս անգամ մարտի տպագրութեամբ և սահուն լեզուով հայերէն թարգմանած է Մ. Ս. Բաքմաճեան, որ իւր աշխատասիրութեամբ արդէն ծանօթ է բազմաց:

Կը ծախուի ամեն Հայ գրավաճառաց խանութը,

Գին 3 քառորդ մէճիտ

Կեդրոնատեղին է Ռիզա-փաշախան Ս. Դ. Պարտիզպանեան և Ընկ. տպարանը:

ՆԱԽԱՅԵՐԻՔ

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ԵՒ

ԱՐՈՒԵՍՏԻՑ

Ազգային դպրոցներու համար

Պ Ա Տ Յ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Գ

Ա Շ Խ Ա Ս Ա Ս Ի Ր Ե Ց

Հանգանակ Ե. Կ. Ս. Միքէլ

Նախկին աշակերտ Ս.

Նուպար-Շահնագարեան վարժարանին:

Սոյն գրկոյքը որուն մէջ կը պարունակին աշխարհագրական, բնագիտական, արուեստից և ճարտարութեանց, բնական պատմութեան, թուագիտութեան, չափոց և դրամոց, օրացոյցի կարեւոր գիտելիքներ, խիստ պարզ և դիւրընտել ոճով գրուած, իւր տեսակին մէջ առաջինն ըլլալով, թէ՛ մանչ և թէ՛ աղջիկ տղայոց յարմար և օգտակար դասագիրք մ'է:

Մանկահասակ բայց բանգէտ հեղինակը տղայոց հետ խօսելու ատեն այնպիսի կոկիկ լեզուաւ և գրաւիչ ոճով մը կը խօսի, որ տղայոց զուարճալի բայց օգտակար դասեր ուսուցանելու ատեն անոնց սիրտն ու միտքն ալ կը հրահանգէ:

Մայրաքաղաքիս և գուռուաց վարժարաններու աշակերտք մեծ օգուտ կրնան քաղել ասկէ, զուարճալիին հետ օգտակարն ու գեղեցիկն ալ ուսանելով:

Կը ծախուի ի գրատան փարիզու և Մէրճան Սրապեան Պաշտասար աղայի խանութը:

Կաշեկազմ գին 8 զր:

ՊՐԱՍԵՑ ԸՆՏԱՆՍԵՑ

ԵՐԿԱՍԻՐԵԱՅ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Խորմեան Սրբազանի գրէն ելած սոյն ընտիր գործը որ ամուսնական կենաց քաղցրութիւնը կը նկարագրէ և նորա ներդաշնակութիւնը խանգարող պատճառաց իմաստուն դարմաններ կը ցուցնէ, ամեն կարգի ընտանեաց ուշի ուշով ընթերցման արժանի է:

Կը գտնուի Ս. Դ. Եղմածեան

գրատունը Եկնի ճամի փողոց թիւ 8 և ուրիշ գրավաճառաց քով:

Գին 1 ֆրանք 75 սանթիմ:

ՏՕԳԹՕՐ ՓԱՓԱՋԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ պատրաստ է իրեն դիմող հիւանդաները դարմանել, ամէն երեքշաբթի և շաբաթ, ժամը 3-5 Սամաթիա Հայկական ընկերութեան քաղնոյն դէմքը Մ. Ճիվանին դեղարանը. և ժամը 8-10 Սուլթան Ահմէտ տիվան եօլու Մ. Ժօրժ Ծաննիդիտիսի դեղարանը թիւ 128:

ՊԱՏԿԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆ ԶՍԱՒԵՐԱԿՍ

Սոյն գեղեցիկատեսիլ պատկերը որ Հայաստանի վաղեմի փառաց և մեծութեան տխուր յիշատակը կը ներկայացնէ հանդերձ հայկական հնութեան խորհրդաւոր նշաններով, այս երկրորդ անգամի փարիզ տպուելով ամենազայեղուչ կերպիւ, չորս տեսակի բաժնուած է:

Ա. ին գինն է 10 ֆրանք

Բ. » » է 7 »

Գ. » » է 6 »

Դ. » » է 5 »

Հայաստանի հնութիւնները իբր հայրենի վաղեմի յիշատակաց մնացորդ պահել ուղղող անձինք պէտք է որ սոյն պատկերն ունենան, որ վայելչագեղ զարդ մը կրնայ ըլլալ տուներու կամ գահիճներու:

Կը գտնուի Արամեան տպարանը Կ. Պոլիս Յակոբեան խան:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ

ԳՐԵԱՑ

Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ կղեր-ներէն մի

Աշխարհականներէն Պատրիարք ըլլալու և եպիսկոպոսներէն ամուսնանալու վրայօք օրինակներով և փաստերով բացատրութեամբ գրուած տետրակ մի է:

Կ'գտնուի Հայ գրավաճառաց քով և ի Գուճ-Գարու Մայր Եկեղեցոյ բանկալը ի գին 100 փարայ:

Հետեւեալ գիրքերը աժան գիներով ծախու տրուած են Պահճէ-Գարուն լրագրավաճառ և ջրավաճառ Պողոս աղային խանութը: Ընթերցասէրները կը հրաւիրեմք օգուտ քաղել այս առիթէն:

Երկն Աւարայրի 11/2 տարուն 45 զր:

Քրիստոնէական Շանչեանց 5 »

Գարեգին ողբերգ 3 »

Գարապաղցոց անձեքաթուղթ 1 »

Ռուսաստանի համբաւաւոր Գրքագէտներէն Մսերեանց Մսեր Մագիտ. րոսի գրած «Պատմութիւն Կաթողիկոսաց Էջմիածնի» անուն հետաքրքրական գիրքն որ նորոգ տպագրուած է ի Մոսկուա, Պոլիս ալ զբրկուած լինելով կը ծախուի վերոյիշեալ տեղը:

Լրագիրս ձեռքէ կը ծախուի կամուրջին զուտը պարագան, սուճի Պ. Պողոսին խանութը և կամուրջին վրայ լրագրավաճառներու քով:

ՏՆՕ--ԽՄԻ. ՏԵՐ

Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Դ. ՊԱՐՏԻՋԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ

Բիզանիա խան քիւ 3